

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա	[3] Համար
14	Մայիս	2020 թ.				Բ	8928176863
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
14	Մայիս	2020 թ.				Սերիա	Համար
						Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Գնման ամսաթիվ			[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)							

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	0	1	0	6	3	3	7
[9] Անվանումը			ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[10] Բանկային տվյալները			Այ՜Դի Բանկ ՓԲԸ			N 11813000406200						
[11] Գտնվելու վայրը (հասցեն)			ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 71 16									
[12] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի												
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	5	0	6	6	3	4
[14] Անվանումը			«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ									
[15] Բանկային տվյալները			ՀՀ Ֆին. ևախ. աշխ. գործ. վարչ.			N 900011180081						
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)			ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՍՄԱ ՎԱԶԳԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ Փ. 5									
[17] Լրացուցիչ տվյալներ												
[18] Ում միջոցով			Անուն, ազգանուն			Համար			Ամսաթիվ			
			Լիազորագիր									

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը					
№ Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Մի միավորի վրա ծախսվող գումարը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից պարսկերեն գրավոր	էջ	8	2000	16000
2	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից պարսկերեն գրավոր	էջ	8	2000	16000
3	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից պարսկերեն գրավոր	էջ	7	2000	14000
4	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից հնդկերեն գրավոր	էջ	15	4000	60000
5	Թարգմանչական ծառայություն՝ հայերեն - ռուսերեն- հայերեն բանավոր	րոպե	40	83.33	3330
Ընդամենը					109330

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)
HOVHANNISYAN SONA 5808870623
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

14/05/2020 16:30:08

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

17-ը մարտի 2020թ.

ք.Երևան

«Վախճանի դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Մ.Հակոբյանս, ուսումնասիրելով Շահին Հասսանի Ռազադիվիանդի վերաբերյալ «Վ Կ Ե Կ» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84100720 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2020 թվականի մարտի 13-ին «Վ Կ Ե Կ» դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Վ Կ Ե Կ» քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84100720 քրեական գործն ըստ մեղադրանքի Շահին Հասսանի Ռազադիվիանդի՝ «Վ Կ Ե Կ» քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով:

2020 թվականի մարտի 16-ին որոշում է կայացվել թիվ 84100720 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վ Կ Ե Կ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Վ Կ Ե Կ» քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալ Շահին Հասսանի Ռազադիվիանդին հայերեն լեզվին չի տիրապետում, այլ տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով և այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էմմա Կարենի Մանուկյանին (անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011-ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ-ի կողմից՝ 16.06.2000թ.):

Էմմա Մանուկյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Շահին Հասսանի Ռազադիվիանդի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84100720 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էմմա Կարենի Մանուկյանին (անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011-ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ-ի կողմից՝ 16.06.2000թ.):

2. Էմմա Մանուկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Էմմա Մանուկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝




Մ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Էմմա Մանուկյան

« 17 » Տարեգրի 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«17» մարտի 2020թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Լ.Գևորգյանս, ուսումնասիրելով Ջեինաթ Նոուրմոհամմադ Ջոլադրիի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84105919 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում քննված թիվ 84105919 քրեական գործն ըստ մեղադրանքի Ջեինաթ Նոուրմոհամմադ Ջոլադրիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 2020 թվականի մարտի 17-ին մեղադրական եզրակացությամբ ստացվել է ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով քննության վարչություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալ Ջեինաթ Նոուրմոհամմադ Ջոլադրին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը, այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու և մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ էմմա Կարենի Մանուկյանին

(անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011-ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ-ի կողմից՝ 16.06.2000թ.):

Էմմա Մանուկյանն ունի համապատասխան կրթություն ազատորեն տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,


ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84105919 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էմմա Կարենի Մանուկյանին (անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011-ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ-ի կողմից՝ 16.06.2000թ.):

Էմմա Մանուկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Էմմա Մանուկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝




Ա.Լ.Գևորգյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Էմմա Մանուկյան

« 11 » 03 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«12» մարտի 2020թ.

ք. Երևան

«ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Լ. Գևորգյանս, ուսումնասիրելով Ֆիրուզ Հասանի Զալիլի Քահրիզինի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84100220 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

«ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում քննված թիվ 84100220 քրեական գործն ըստ մեղադրանքի Ֆիրուզ Հասանի Զալիլի Քահրիզինի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 2020 թվականի մարտի 11-ին մեղադրական եզրակացությամբ ստացվել է ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով քննության վարչություն:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրյալ լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալ Ֆիրուզ Հասանի Զալիլի Քահրիզինին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը, այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու և մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով

(անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011 ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ ի կողմից՝ 16.06.2000թ.):

Էմմա Մանուկյանն ունի համապատասխան կրթություն ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277 լրի հոդվածի 4 լրի մասով,


ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84100220 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էմմա Կարենի Մանուկյանին (անձնագիր՝ AS 0263626, տրված՝ 06.07.2018թ., 011 ի կողմից, դիպլոմ A062710՝ տրված ԵՊՀ ի կողմից՝ 16.06.2000թ.):

Էմմա Մանուկյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Էմմա Մանուկյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1 ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝




Ա.Լ. Գևորգյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկսած սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Էմմա Մանուկյան

« 12 » Ծածրբի 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

17.03.2020թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Ասատրյանս, ուսումնասիրելով թիվ 14953219 քրեական գործով մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն է ստացվել թիվ 14953219 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ջասկարան Կոնելի Սինգհի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ մեղադրական եզրակացությամբ:

Մինչդատական քրեական վարույթի ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Ջասկարան Կոնելի Սինգհը տիրապետում է հնդկերեն լեզվին, հետևաբար մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածները անհրաժեշտ է նրան տրամադրել հնդկերեն լեզվով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում է թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Նկատի ունենալով, որ Ջասկարան Կոնելի Սինգհը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է հնդկերեն լեզվին, ուստի մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման հաստատված թարգմանությունները վերջինիս հասկանալի լեզվով նրան հանձնելու համար հայերենից հնդկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանապակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Մանիկ Աչարյանին/նույնականացման քարտ 005149513/, ով անցել է դասընթացներ՝ թարգմանիչների վերապատրաստում հայերենից հնդկերեն և հնդկերենից հայերեն՝ դիպլոմ 000777:

Նկատի ունենալով, որ Մանիկ Աչարյանը տիրապետում է հայերեն և հնդկերեն լեզուներին, նրա ձեռնահասությունը կասկած չի հարուցում, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 53-րդ և 83-րդ հոդվածով,


ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 14953219 քրեական գործով մեղադրական մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման թարգմանությունն իրականացնելու համար հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանապակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Մանիկ Աչարյանին:

Մանիկ Աչարյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Մանիկ Աչարյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ՝




Վ.Ասատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Մանիկ Աչարյան
« 18 » 03 2020 թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

16 մարտի, 2020 թ.

ք. Իջևան

Տավուշի մարզի դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Զ. Ն. Բաբայանս, ուսումնասիրելով Ստոիլ Բոյանով Խրիստովի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատավարական ընթացակարգի կապակցությամբ կազմված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2019 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 15:15-ին, ՀՀ ԱԱԾ ՍԶ Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել, այնուհետև նույն օրը ժամը 17:30-ին ձերբակալվել է Ստոիլ Բոյանով Խրիստովը /ծնված 29.01.1973թ., Բուլղարիայի Հանրապետության քաղաքացի/, ով 2017 թվականի դեկտեմբերի 11-ից հետախուզվում է • Ղրղզստանի ազգային անվտանգության կոմիտեի կողմից սահմանն ապօրինի հատելու մեղադրանքով, խափանման միջոցը՝ կալանավորում:

Տավուշի մարզի դատախազության կողմից միջնորդություն է ներկայացվել Ս.Խրիստովի նկատմամբ 40 օր ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.08.2019թ. որոշմամբ նշված միջնորդությունը բավարարվել է մասնակի, Ս.Խրիստովի նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

2019 թվականի սեպտեմբերի 13-ին Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից Ստոիլ Խրիստովի նկատմամբ կիրառվել է հանձնման նպատակով կալանավորում՝ 2 ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազի 20.09.2019թ. որոշմամբ թույլատրվել է քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով Ս.Խրիստովի հանձնումը Ղրղզստանի Հանրապետության /ՂՀ/ իրավասու մարմիններին:

2020 թվականի հունվարի 10-ին Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից Ստոիլ Բոյանով Խրիստովին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգվել է 2 ամիս ժամանակով՝ մինչև 2020 թվականի մարտի 17-ը:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 11.03.2020 թ. որոշմամբ մերժվել է Ստոիլ Բոյանով Խրիստովին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու մասին միջնորդությունը:


Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Ծովինար Խոսրովի Թորոսյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ստոիլ Բոյանով Խրիստովի նկատմամբ որպես խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին ընտրելու հետագա ընթացակարգի բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ծովինար Խոսրովի Թորոսյանին (անձնագիր 002132918, դիպլոմ 015328, տրված՝ 22.06.1984թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

**Տավուշի մարզի դատախազության դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝**



Զ. Ն. Բաբայան

-Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«16» 03 2020թ.